Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ ԹԻՎ 26-Ն, 27-Ա, 29-Ա ԵՎ 30-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 26-Ն որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասին հղում կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ չեն ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «(այլ դասերին չպատկանող)» բառերը:

Թիվ 27-Ա որոշման մեջ գրառված չէ տեղեկատվություն անշարժ գույքի սեփականատիրոջ մասին:

Թիվ թիվ 29-Ա և 30-Ա որոշումների նախաբաններում հղումները թերի և սխալ են գրառված: Բացի այդ, որոշումների մեջ գրառված չէ «Կլորիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք ունենալու փաստը: Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի՝ հողամասն առանց մրցույթի վարձակալության են տրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց, ինչպես նաև պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու դեպքում:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
16.07.2020թ.